

ՏԱՄՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 5 ռուբլ:
Ուսանողի համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մէր-հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
Երբեք մշտնապես. Tiflis. Redaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Բաշտարարութիւնը ընդունում է ամեն լեզուով:
Բաշտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ
Կիրակի օրվայ և տոնի հանգիստը.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատասխան. Դամակ Եղուարդի:
Ներքին Լուրեր. — Հեռագրի մասին. — ՅԱՅՏԱՐԱՐ
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպայի ու
ասիայի մասին:

ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱՅ ԵՒ ՏՈՆԻ ՀԱՆԳԻՍՏ
Գիտէ՛ք ևս հին ազգերի մէջ բոլոր տօնե-
րը ունենին կրօնական նշանակութիւն: Մով-
սէս պատուիրեց իր ազգին, զեռ այն ժա-
մանակ, երբ հրեական ազգը կազմում էր
կրօնական համայնություն, շարժվալ
եօթներորդ օրը հանգիստ ունենէր և
աղօթէր, որովհետեւ այդ օրը Աստուծո՛ւ
օրն է:

Կարգութիւնը քաղաքակրթելով սկսեց
ըմբռնել տօնի և կիրակի օրվայ հանգստի
կրօնական-սոցիալական նշանակութիւնը, մա-
նուստեղ աշխատող ամբողջ համայն:
Անշուշտ կրօնական գաղափարը դեռ
ևս հրեաների մէջ, ամբողջում էր իր մէջ
և բարոյական ու մտաւոր, մի խօսքով հո-
գեկան գաղափար: Ամբողջ համայն հան-
գստանալ տօն կամ կիրակի օրերին, իսկա-
պէս պէտք է նշանակէ հանգստանալ
բարոյական և ֆիզիկական: Բայց այդ բա-
ւական չէ. կիրակի կամ տօն օրը, առհա-
սարակ, աշխատող ամբողջ համայն պէտք է
միջոց տայ և մտաւորապէս ու հոգեպէս
կազմակերպելու, վերանորոգելու: Հարկաւոր
է, որ մարդը, ժամանակ առ ժամանակ
հանգստանայ, որ նա դուրսանայ միջնե-
անգամ հարկաւոր է, որ նրա հոգին նոր
անուշադ աւելի, որ նրա մարմինը կազմաւոր-
վի, նոր ոյժեր ստանայ:
Ունենով կրօնական, բարոյական, մտաւոր,
հոգեկան և առողջական նշանակութիւնը
տօնի, բայց մասնաւոր շարժվալ մէջ

եօթներորդ օրվայ, կիրակվայ հանգիստը
ունի մարդկութեան համար և մեծ սօցիալ-
տիկան նշանակութիւն:

Աշխատանքից, ամենօրեայ աշխատանքից
յետոյ, պարբերաբար հանգստանալ
անհրաժեշտ է մարդու համար, մանաւանդ
աշխատող ամբողջ, գործուական, նեղ նիւ-
թական կեանք վարող մարդու համար:
Բայց ի՞նչ է նշանակում հանգստանալ:
Միթէ հանգստանալ նշանակում է ան-
գործ մնալ. ոչ: Կամ միթէ հանգստա-
նալ նշանակում է քէֆ անել, հարբել
և մարմինն ու հոգին աւելի էլ մաշել:
Այդ էլ չէ:

Ուրեմն ի՞նչ է նշանակում հանգստանալ:
Աշխատող համայն, իր ամբողջ օրերը ֆի-
զիկական ծանր գործի մէջ, կամ սիրտ ու
հոգի մաշող, նեղ նիւթական, գործուական
կեանքի մէջ անցնող մարդու համար
հանգստանալ նշանակում է կազմաւորել
իր մարմինն ու հոգին, նոր կեանք տալ,
նոր ոյժ տալ, նոր մտաւոր ու ոյժ իր մարմին
ու հոգուն, որպէս զի այդ տեսակ հան-
գստութիւնից յետոյ, մարդը աւելի թաւա-
րիկ, աւելի ընդունակ լինի նորից բանե-
լու, նորից և կրկնապատիկ ոյժերով աշխա-
տելու:

Մեզանում, ընդհանրապէս, փոխանակ
տօն օրերին իրանց ոյժերը նորից կազմա-
ւորելու, փոխանակ իրանց մարմինն ու հոգին
թաւաքանդելու, մարդիկ թէ տօն և թէ կի-
րակի օրերին աւելի էլ սպառում են իրանց
ոյժերը, յորձեցնում են իրանց, և տօն ու
կիրակի օրերին յաճախող օրերում աւելի
անընդունակ են դառնում իրանց մարմի-
նը աշխատութեանը նուիրելու, աւելի էլ
մաշում են իրանց հոգին...

Կրկնում ենք մեր հարցը. ի՞նչ է նշա-
նակում աշխատողի համար, տօնն և իննե-
րորդ դարի քաղաքակրթութեան մարդկութեան
քաղաքացու համար, իր ամբողջ օրերը նեղ

նիւթական հաշիւների մէջ, կամ ծանր
ֆիզիկական աշխատանքի մէջ անցնող ան-
հատի համար հանգստանալ:

Այդ հարցին եկեղեցին պատասխանում
է. հանգստանալ նշանակում է աղօթել
սուրբ գիրքը. կարգաւ կամ լսել սուրբ
գրքի ընթերցանութիւնը, հոգեպէս վերա-
կապուել կրօնական քարոզի ներգործու-
թեան տակ: Համաձայն ենք. բայց ի՞նչ
նշանակում ունի այդ գաղափարի հետ հա-
մաձայն են, որոնք իրանք են քարոզում
այդ ուրիշներին, ի՞նչ իրանք չեն գնում
եկեղեցի, ի՞նչ եկեղեցիները կիրակի և
տօն օրերը կիսով չափ դատարկ են մնում:
Իսկ ամբողջ եկեղեցի գնալու փոխանակ
քէֆ է անում, հարբում, սիրտը, հոգին
ու մարմինը մաշող. դուրսնում թաւաքան-
դելու, անցնում տօն և կիրակի օրերը և փո-
խանակ հանգստանալու, ֆիզիկական ու
բարոյական թաւաքանդելու, տօն օրերից
յետոյ աւելի յոգնած, աւելի մաշված, ա-
ւելի անընդունակ է դառնում աշխա-
տելու:

Աշխատանքից յետոյ հանգստանալը, մեր
կարծիքով, մի բարդ, բաղադրեալ գործ-
ողութիւն է, որ պահանջում է մի կատա-
րեալ ներդաշնակութիւն մարդու հոգեկան,
բարոյական, մտաւոր և ֆիզիկական բոլոր
ֆակտորների մէջ, որպէս զի իր նպատակին
հասնի:

Տօնի և կիրակի օրվայ կոչումը քաղա-
քակրթութեան մարդկութեան մէջ կայանում է
նրանում, որ այս կամ այն միակողմանի
կեանք վարող անհատի մէջ գտնէ ժամա-
նակաւորապէս, պարբերաբար մտնելի նո-
րից կատարեալ ներդաշնակութիւնը
նրա հետ մէջ, այդ եւս բոլոր գործակա-
տարութիւններում վերահաստատելի շա-
րժվալ ընթացքում, ամենօրեայ ծանր,
բեմաշնոյ, ոյժերը սպառող աշխատանքից
խախտված ներդաշնակութիւնը նրա հո-

գեկան և ֆիզիկական բոլոր ֆակտոր-
ների մէջ:

Ուրեմն կատարեալ ներդաշնակութիւնը
անհատի կազմաւորման հոգեկան, բարոյա-
կան, մտաւոր և ֆիզիկական գործակա-
տարութիւնների մէջ վերահաստատելու
համար, տօն օրերին, բայց աղօթելուց և
կրօնական քարոզ լսելուց, ամբողջ մարդու
աշխատողի, բանւորի, վաճառականի, գոր-
ծակատարի և այլոց համար, մի խօսքով
ժողովրդի համար, այդ բառի լայն նշա-
նակութեամբ, — հարկաւոր է և մտաւոր
անուշ հրապարակական հասկանալի դասի
ձևով, և քաղաքացուցիչ միջոցներ, և առողջ
գոյարձութիւն, և մարմինը կազմաւորող ա-
ռողջ օդ, և գեղեցիկ ընտելիւն, և ֆիզի-
կական վարժութիւններ:

Այ մեզանից տեսել է թէ ինչպէս է անց-
կացնում կիրակի կամ տօն օրերը քաղաքա-
կրթ մարդկութիւնը, չէր կարող չը հա-
մաձայն օր հարա կայ հասնել տօն օրերի
հանգստի միջոցով մեր վերև յիշված բազ-
մակողմանի ներդաշնակութեան վերահաս-
տատելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

Կարգաւոր ուղարկութեամբ «Մշակ» № 45-ի
մէջ տպւած Թ. Ա. ստորագրութեամբ Մովսիս-
այի ուղարկած նամակը, նշատութեամբ նկատուած
է, որ հեղինակը ոչ թէ երկրի ընդհանուր շահ
ունի աչքի առաւ, այլ իր սեփական առաքա-
կան տեսակէտով: Եթէ ես առաջարկում եմ, որ
չերամպպաները փոքր քանակութեամբ սերմ
պահեն, ես անում եմ այդ այն նպատակով, որ
պէս զի կարելի լինի պահպանել մի շարք տե-

ժամանակի մեծ փոփոխութիւնը. մի ժամանակ
այս շինութիւնը կուտանայ վանք էր, իսկ այսօր
գտնում ես կոյսերի փոխարէն մեծ թւով պրօֆե-
սորներ, նոր սերնդի մասին հոգս տանողներ
կրկնէ դանդաղ մտնելով, դուրս ես գալիս մի
երկար միջանցք (կորրիդոր), օրի պատերի վրա
լին են գանազան յայտարարութիւններ. դնալով
մինչև միջանցքի վերը, աչքիդ է ընկնում երկու
կողմից սանդուղներ, որոնց վրա բարձրադաս
հասնում ես մի տափարակ տեղ, որը չը պատ-
ված է երեք պատերով և երեք դռներով. բացի-
լով միջին դուռը, մտնում ես մի փոքրիկ սալի-
տակ սենեակ, ուր դրված է մի փայտեայ սեղան
և մի քանի աթոռներ, իսկ մի անկիւնում էլ մի
ժամգոտած երկաթէ վառարան: Այս սենեակը
չառ խորհրդաւոր է. այստեղ պիտի խաղաւ-
չիւր ընկող մի քանի ժամ պասել, մինչև որ
ընտելութեան ժամը հասնի: Մի փոքրիկ, բայց խոր-
հրդաւոր սենեակ: Այս փոքրիկ սենեակում են
մի քանի ժամ սպասել յարգելի ընթերցողներ,
Հայդէնի համալսարանում աւարտած յայտնի գիտ-
նական մարդիկը, որոնք անխնայ աշխատակրո-
թեամբ և անընդհատ աշխատութեամբ դոկտո-
րութեան տիտղոս են ձուլը բերել:

Ուղարկութեան արժանի է այն դէպքը, որ
կանդիդատները այս սենեակին են մտնում պարա-
նոցը սպիտակ թաշկինակով փաթաթած և սև
հագուստով իրենց բարեկամների հետ, որոնք ի-
րանց հետ են ունենում վերաբերմունք, գտակները,
փայտերը և մինչև անգամ իրանց չնորը: Կանդի-
դատը նստում է աթոռի վրա, իսկ բարեկամները
մնում են կանգնած: Այդ լուսնին կանդիդատը
բարեկամների աչքին առաջվանից աւելի բարձր է
երևում, որովհետև չուտով գիտնականի տիտղոսը
պիտի տոնայ:

Ինչ հոլանդական ուսանողների աշխատա-
րութեանն է վերաբերում, դրանք շատ աշխատա-
ւելի են, և ամենագովիւն այն է, որ մնում են ի-
րանց ազգային բնաւորութեան, սովորութիւննե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Եւրոպայի և Ասիայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

Եւրոպայի մասին

դի ունեցող չափազանց չարիքների, որոնք, կրկնում եմ դարձնելով, չարամապաղություն անկման գլխավոր պատճառներն են: Այս խորհուրդ եմ տալիս ընդդիմախոսին հաւաքել լուրջ տեղեկութիւններ չարամապաղութեան ծաղկած ժամանակին պահած սերմի քանակութեան մասին և ես հաւատարմացնում եմ, որ պարունը կը համոզվի ասած ճշմարտութեան մէջ—կը նկատի որ այժմեան պահած սերմի քանակութեան մի տասներորդ մասը էին պահում տասնական տարիներից առաջ: Մօտ 20 տարի ընտելեցնելով կովկասում և միջոտ յարաբերութիւն ունենալով երկրի չարամապաղների հետ, ես ինքս անձամբ տեսել եմ, որ գիւղացիները չունեն այնպիսի մեծ ընդարձակութեամբ որդեանդներ, որոնցով կարելի լինի 2—3 ֆունտ սերմ պահել: Ունեն գիւղացիները այնքան տերեւ, որով կարողանան այս ահագին քանակութիւնը պահել: Ընդունելով թէ չարամապաղները ունեն լայնատարած որդեանդներ, բայց ճշման այնքան մարդիկ, որ կարողանան սերմի այդ քանակութիւնը հասցնել լաւ հետեւներ: Ինչ եւ քարոզում ֆրանսիական և իտալական չարամապաղները—սերմի փոքր քանակութեամբ պահելը, որի անդուլթիւնը անկախաբար է: Դէպք սրա համար է, որ ֆրանսիացի ակադեմիկոս գիտնական Պաստիօրը ասել է. քիչ սերմ պահելով մեծ մեծ մասնաբաններ կ'ուենան, և այս բանը այնքան լաւ են հասկացել ֆրանսիական, իտալական, սպանիական և տաճիկ չարամապաղները, որ վերջիվերջ երկրներում ամեն մի տուն, միջին թուով պահում է ոչ անելի քան 12 զոյտնիկ սերմ: Իսկ ինչ վերաբերում է պարսիկ այն խօսքերին, թէ գիւղացիք մեծ քանակութեամբ են սերմ պահում, որ պատճառով, որ միները, միջինները, օճերը և կարիճները ոչնչացնում են սերմի մեծ մասը, ճշմարիտն ասած, ամօթ է այսպիսի պատճառներ բերելը, որովհետեւ թէ չարամապաղները այնքան խելացի չեն, որ կարող լինեն այդ տեսանելի կենդանիների առաջն առնել, այն ժամանակ անել լաւ կը լինէր, որ նրանք պարսպին ոչխարաբուծութեամբ և խոզապահութեամբ և այդ հանգամանքում այն վնասակար կենդանիները և սողունները չեն կարող վնասել նրանց: Վերջիվերջ կենդանիները այլ երկրներում չը կան միթէ, որ կարողանային որ և է չարամապաղի որդիները ոչնչացնել: Ճշմարիտ է, որ լուսաւորված երկրներում սերմը գետնի վրա չեն պահում, ինչպէս կովկասում, այլ դնում են թաւերի վրա վնասակար կենդանիներից զերծ պահելու համար: Հաւանական է, որ կովկասցիները հին սերունդը

անելի ինամատար էր քան թէ այժմեանը, որովհետեւ այդ վնասակար կենդանիները գոյութիւն ունէին քառասնական տարիներից առաջ, բայց և այնպէս դրանք չէին արգելում, որ բոժոժի հունձը հասնէր մինչև 600,000 պուլի, այն ինչ ներկայ տարիներում ամենաշատը լինում է 130,000 պուլ թաց բոժոժ: Եթէ ես արգելում եմ գիւղացիներին սերմ պատրաստել աչքի առաջ եմ ունեցել նրանց օգուտը, որովհետեւ հմը պէտք է մեղադրել եսպոնական տեսակի այլասեւեւում մասին և սրանից ստացած վատ հետեւանքները, եթէ ոչ գիւղացիներին, որոնք ուզում են անպատճառ սերմ պատրաստել: Իտալական և ֆրանսիական ցելուլյէր սերմից ամեն տեղ ստացած լաւ հետեւանքները ամենաճիշտ ապացոյցներ են ասածներին, մասնաւորապէս որ եթէ այն սերմի նորոգ վերամշակումը, եթէ ոչ անկարելի, գոնեայ շատ դժուար է, աչքի առաջ ունենալով նրան հարկաւոր եղած ընտրութիւնը և լաւ տեսակների միմեանց հետ խառնելը: Թող ուրեմն գիւղացիները թող տան մասնագէտ և հմուտ մարդոց, որ իրանց մատակարարեն լաւ սերմ, որի պատրաստելու համար այն մասնագէտները ահագին նիւթական ծախսեր են անում, մեծ մեծ շինութիւններ են պահում և հարկաւոր եղած գործիքներ դնում: Եթէ տեղիս Գիւղատնտեսական ընկերութիւնը գիւղացիներին տալիս է սերմի ֆունտը 52 րուբլով, անպատճառ այդ սերմը ընկերութեան նստել է կրկնակի գինով: Այս շատ կը ցանկայի, որ գիւղացիները լաւ հասկանային իրանց սեփական օգուտը գնելով ցելուլյէր սերմի ամեն մի զոյտնիկը մի րուբլով և պահէին իմ ցոյց տուած քանակութեամբ, որովհետեւ այս հանգամանքում բոլորն էլ անդուլթիւն կունենան: Այն ժամանակ երկրիւր և նրա բնակիչները այլ ևս չեն լինի թշուառութեան մէջ, որում գտնվում են այսօր: Օրինակը անելի լաւ կապացոյցների ասածս, ցելուլյէր սերմի իւրաքանչիւր զոյտնիկը գնելով 1 ր. 20 կ., ընդամենը կարծեսայ 12 ր., պահելով միայն վերոյիշեալ քանակութիւնը, լաւ խնամելով և գերծ կացութեան տակ վնասակար կենդանիներից, անպատճառ գիւղացին կը տանայ, ամենաքիչը, ամեն մի զոյտնիկ սերմից 15 ֆունտ լաւ թաց բոժոժ, որի պուլը հնչուութեամբ 20 րուբլով կը ծախվի, ուրեմն գիւղացին կունենայ 3 պուլ և 30 ֆունտ բոժոժ, որը կարծեսայ 75 րուբլի: Զեղջելով վերջիվերջ գումարից սերմին տուած 12 ր. կը մնայ 63 րուբլի այն բոլոր հոգսի համար որ կը կատարի գիւղացին 40 օրում և թիթնու տերեւներ

ի համար, որոնք բացի չերմի որդիներից այլ բանի չեն պէտք գալիս: Եթէ կովկասը ունի 200,000 չարամապաղներ և եթէ սրանք խնամեն որդիներին ամեն տարի խելացի կերպով, այն ժամանակ երկիրս կը հարստանայ ամեն տարի 12,600,000 րուբլի գումարով: Ինչ պէտք է անել, որպէս զի կովկասեան չարամապաղները հետեւին լուսաւորված երկրների չարամապաղներին, որոնք բաւականաճախ են քիչ քանակութեամբ որդեւ պահելով և չեն փորձում 6 զոյտնիկ ցելուլյէր սերմին վճարել 6—7 րուբլի գումար: Միթէ այս վերջինները չեն փորձել սերմ պատրաստել իրանց համար, բայց տեսնելով որ իրանց չէ անդուլթում այդ և լաւ ըմբռնելով որ ի դուր տեղն է կորուստ իրանց աշխատանքը,—թիթնու տերեւ և գործադրած ջանքը և սերմ պատրաստելու հոգսը թողել են անելի հասկացող մասնագէտներին: Հէնց այս պատճառով էր, որ մօտ օրերումս, Պաստիօրի աշակերտ Մալիօ (Maillet) գրեց ինձ հետեւեալը—«Այս խորհուրդ եմ տալիս ֆրանսիական չարամապաղներին իրանց համար սերմ պատրաստել միայն այն ժամանակ երբ, որ նրանք լաւ պատրաստված կը լինեն այդ բանի համար»: Հիմա դատեցէք, եթէ ֆրանսիական չարամապաղները դեռ ևս պատրաստ չեն այդ բանի համար, ապա ինչ պէտք է լինեն կովկասցիները: Իսկ ինչ որ վերաբերում է եսպոնական տեսակին, սրա համար պէտք է անել, որ եսպոնականի հոգեհանգիստը ամեն տեղ վաղուց է կատարվել և բոլոր չարամապաղական երկրներում դրան փոխարինել և ֆրանսիական և իտալական դեղին տեսակը: Երկրպագում Մարսելում եսպոնական չոր բոժոժի պուլը ծախվում է 52 ր., այն ինչ ֆրանսիական տեսակի պուլը—92 ր., ես կաւեւցնեմ սրա վրա և այն, որ եսպոնական բոժոժի պուլը 52 րուբլով ծախվելու համար հարկաւոր է եղել նրանց հանել 320% մնացորդը, այսինքն կեղտոտած, շիտակ և թույլ բոժոժները. այն ինչ ֆրանսիական դեղին բոժոժներում կեղտոտածները անձանօթ են և շիտակները երևան են գալիս միայն 40%: Զը նայելով որ նախագծերս շատ անհրաժեշտներ են հանդիսւում, այնու ամենայնիւ ես դարձեալ կը պաշտպանեմ և կասեմ իմ բաղմաթիւ ընդդիմախօսներին թէ, արդեօք այդ պարունները չեն տեսել, ֆրանսիայի հարաւային չարամապաղական գաւառներում ճանապարհորդելիս, բոլոր ճանապարհների երկու կողմերն էլ զարդարված թիթնիներով: Զը գիտեն միթէ այդ պարունները, որ ամեն առաւօտ ցօղը և անձրեւ

ները լուսնում են տերեւները. կամ մի խօսքով միթէ գիւղացին չէ կարող ճիւղերը կտրելուց յետոյ լաւ լուսնով և չորացնելուց յետոյ տալ որդիներին: Ընդդիմախօսներս չեն տեսել արդեօք կովկասում ճանապարհորդելիս սայլեր, ձի, էշ և ջորիներ բարձած թիթնու ճիւղերով, որոնք մինչև տուն հասնելը համարեա ամբողջ ճանապարհը անելում են և այսպէս սարսափելի կերպով թողնուովում և հարկէ շատ ցանկալի է որ մարդ կարողանայ ունենալ անարատ և նոյն իսկ թագի մի հիւլէից զուրկ տերեւ, բայց, իմ կարծիքով, անելի լաւ է թողտ տերեւ ունենալ, քան թէ տեսնել որդիների կտորները կերակուր չունենալու պատճառով: Առաջարկելով կառավարութեանը, որ նա երկրիցս դուրս տանվող մետաքսից, բոժոժից և կաղից մաքս վերցնի, ես այն նպատակով եմ ասում, որպէս զի կառավարութիւնը կարողանայ վերականգնեցնել չարամապաղութիւնը: Զը նայելով որ բոժոժի մի շատ փոքր քանակութիւն է ուղարկվում արտասահման, բայց այնու ամենայնիւ ես կասեմ, որ շատ ցաւալի է տեսնել երկրիցս ուղարկել արտասահման հազարաւոր պուլ բոժոժի, որով քանի մի վաճառականներ պահանջած կը լինեն քանի մի հազար րուբլի, բայց «նրանք» գրկում են աշխատանքից բազմաթիւ մանաւանդներ և հազարաւոր ընտանիքներ: Բացի սրանից պէտք է ասել և այն, որ եթէ երկիրս մետաքսային արտադրութիւնը մնայ այստեղ այն ժամանակ մենք ստիպված չենք լինի դիմել Իտալիային և Ֆրանսիային մետաքս ստանալու համար, և ամեն տարի մի միլիոն րուբլիներ չէնք կորցնի: Այս շատ լաւ են հասկանում, որ մետաքսային վաճառականութիւնը, որը անցեալներում կովկասեան վաճառականների գլխավոր և արդիւնաւոր պարագունքն էր, հիմայ նա ընկնում է, և կարծես թէ ձգտում է օրից օր անհետանալուն: Բոլոր մանաւանդ ունեցողները պէտք է, եթէ իրանց օգուտը լաւ լինեն հասկանալիս, մետաքսը չեն և թաւեայ գործարանատէրերը հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնեն: Վերջապէս, ամեն հանգամանքում, արտասահման մետաքսից մի թիթն մաքս վերցնելը չի արգելի բոլորովին ծառք վաճառականներին գնել լաւ բոժոժ և լաւ մետաքս, վճարելով պուլին քանի մի րուբլի անելի: Եթէ մենք լուրջ ուշադրութիւն դարձնենք Ռուսաստանի այն մաքսի վրա, որը առնվում է արտասահմանից եկած մետաքսից, նրից, այն ժամանակ մեծ զանգուշանութիւն կը գտնենք նրա մէջ: Այսպէս, օրինակ, արտասահմանից եկած գրեթէ կոչված մետաքսի իւրաքանչիւր

րին, բարձր ու վաղըին հաւատարմութիւն է այն ուսանողը, որը իր ազգային պայքարն սովորութիւնները թողնում է: Իւրաքանչիւր նշանաւոր ազգային սօսին բոլորն էլ մասնակից են լինում, ինչպէս, օրինակ, դրանց մօտ պատահում է իւրաքանչիւր 5 տարին, յունիս ամսին, մի ազգային տօն, որը գրեթէ մի շաբաթ է տևում: Այս տօնին ինչպէս համալսարանը, նոյնպէս և ուսանողութիւնը իրան չէզոք չէ պահում. նախ ուսանողութիւնը դիմախներով և տօնին յարմար ազգային հագուստով ուղևորվում է համալսարան և երեկոյեան սկսում է դրօշակներով քաղաքի լուսաւորված փողոցներում զբօսնել: Այդ զգեստները հասարակ կտորից կամ թղթից չեն կարված. ուսանողական «Stammbuch» գիրքը հաւատարմութիւն է, որ ուսանողների մէջ այնպիսիները կան, որոնց հանդերձ 2000 րուբլուց անելի արժէ: Զբօսանքից վերադառնալուց յետոյ գնում են բոլոր ուսանողներն իրենց ուսուցիչների հետ մի քաղաքային դահլիճ, ուր մինչև առաւօտեան ժամը 7-ը պարանանդէս է լինում: Միև օրերն անցնում են խնդրանքներով, գինի կոնծելով, սակայն դրանք իրենց զուարճութեան ժամանակ ծայրահեղութեան չեն հասնում, ինչպէս որ այդ գերմանական ուսանողութեան մէջ յաճախ տեղի է ունենում Գրանը գինի ճանաչելու մէջ բաւականին ընդունակութիւն ունեն և մի որ և է պանդոկ զնայիս հագել թէ մի բանի բաժակ գինով բաւականան, սակայն զարմանալիս այն է, որ գինի խմելիս առհասարակ կամ ոտորները կամ հակութիւններ են ուտում, այն էլ մեծ քանակութեամբ: Ուսանողական «Stammbuch»-ի հեղինակը պատմում է, որ ինքը մի անգամ հոլանդական ուսանողների հետ միասին պանդոկում լինելով, զարմացաւ, երբ տեսաւ, որ ուսանողները մի քանի հազար ոտորներ կերան:

Ընկերական կեանքը ուսանողների մէջ շատ զարգացած է, սակայն խմելու համար, ինչպէս Գերմանիայում է, Հոլանդիայում ընկերութիւններ չը կան, բոլորն էլ գիտութեան, զարգացման և նախաձեռնարկներ են հետեւեալ համալսարանները: Օքսֆորդ և Կեմբրիջ, որոնք մինչև այսօր ևս իրենց միջնադարեան բնաւորութիւնը պահպանել են: Անգլիական ուսանողն աշխատասէր է, բայց հպարտ է և ընկերական ոգի չունի: Աշխատասիրութեան համար ուսանողական «Stammbuch»-ի հեղինակը բերում է փաստ, որ ինչ նրանք սովորում են, պիտի որպէս ամբողջութիւն սովորեն, նոյն իսկ այս մաքսի Օքսֆորդի համալսարանը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ մի որ և է մասնագիտութիւն

ուսանողների ինքնուրույն, ամբողջովին ուսումնասիրել, օրինակ, եթէ մէկը լեզուաբանութիւն է սովորում, նա պարտական է այդ գիտութիւնը իր օժանդակ գիտութիւնների հետ միասին ուսումնասիրել: Ուսանողի հպարտութիւնը նկատում են այն հանգամանքում, որ եթէ երկու ուսանողներ երկար ժամանակ մի որ և է կց պանդոկում մի և նոյն սեղանի վրա ճաշում են, այն ժամանակ միայն իրար հետ կը խօսեն և ճաշելուց առաջ կողջունեն, եթէ մի միջնորդ անձ նրանց ծանօթացնէ, այսպէս է պահանջում սովորութիւնը, քաղաքավարութիւնը: Անգլիական ուսանողը ժամանակ է, նա ամեն օր առաւօտ և երեկոյ կը գնայ եկեղեցի:

Պի վերահսկողութիւնը երկույեան ժամը 9-ից արդէն ընկնում է ուստիկանութեան ձեռքը: Օքսֆորդի և Կեմբրիջի ուսանող վերջացնում է համալսարանը, ստանալով մի քանի քննութիւններից յետոյ Baccalaureus տիտղոսը (առաջին աստիճանը համալսարանական պատուով). մինչև 1850 թվ սկիզբները քննվում էին ուսանողները հին լեզուներից, միջինմատիկայից և քրիստոնեականութիւնից: Այդ ժամանակից յետոյ մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնց միջոցաւ քննութիւններն սկսեցին գերմանական համալսարանների կերպարանք առնել:

ԱՆԳԼԻԱ

Անգլիայում յայտնի են հետեւեալ համալսարանները: Օքսֆորդ և Կեմբրիջ, որոնք մինչև այսօր ևս իրենց միջնադարեան բնաւորութիւնը պահպանել են: Անգլիական ուսանողն աշխատասէր է, բայց հպարտ է և ընկերական ոգի չունի: Աշխատասիրութեան համար ուսանողական «Stammbuch»-ի հեղինակը բերում է փաստ, որ ինչ նրանք սովորում են, պիտի որպէս ամբողջութիւն սովորեն, նոյն իսկ այս մաքսի Օքսֆորդի համալսարանը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ մի որ և է մասնագիտութիւն

Անգլիական ուսանողութիւնն անելի աշակերտական բնաւորութիւն ունի, այն է նոցա իրաւունքները սահմանափակված են միշտ. 1869 թվակ. արած բարենորոգումների համաձայն ներկայումս դեռ առաջուանից լաւ է մինչև վերջիվերջ թաւանն ուսանողները ստիպված էին ապրել ու ճաշել համալսարանում, օրեկան երկու անգամ եկեղեցի գնալ և այլն, մի խօսքով նոցա ազատութիւնը խլուած լինելով, նմանում էին գիւղերի գիւմազիստներին, որոնք առանց վերապագուի հրամանի չէին կարող անգամ մի քայլ անել գիւմազիստի պատերից դուրս: Բայց 1869 թ. անգլիացի նոր սերունդի համար նշանաւոր է նորանով, որ նոքա մի քանի քայլ դէպի ազատութիւն արին. այս թաւանին իրաւունք տուին ուսանողներին համալսարանից դուրս ճաշելու և իրանց ցանկութեան համաձայն սենեակներ վարձելու, միայն այն պայմանաւ, որ համալսարանի պաշտօնեաները պիտի բնակարանը քննեն և իրանց տիրույթի խմանա ուսանողի երեկոյեան տուն վերադառնալու ժամը: Անգլիական ուսանող

Անգլիական ուսանողներն անուանում են իրանց commoners: Դրա մեծ մասամբ ապրում ու ճանաչում են համալսարանում: Բայց համալսարանի պաշտօնեաներից ապրում է նոյնպէս մի որդ թիւ գիտնականներին, որոնք գիտնական անպարիզում իրանց մատուցած ծառայութեան համար ստանում են մատակարարվել 46,000 ր. և Գրա իրաւունք չունեն ամուսնանալու, մինչև որ համալսարանում պաշտօն չը ստանան:

Ուսանողների մէջ հաւատարմութիւն չը կայ. ուսանողութիւնը բաժանվում է չորս կարգի. 1) Noblemen, ազնուականների անդամներին որդեգրող: 2) Gentlemen Commoners (Օքսֆորդում) և Fellow-Commoners (Կեմբրիջում)—ազնուականների կրթութեւր որդեգր, կամ ոչ ազնուականներ, որոնք մեծ կարողութեան տէր են: 3) Pensioners, ուսանողներ միջին դասից և 4) Servitors (Օքսֆորդում) Sigars (Կեմբրիջում), ստորին դասից:

րից աղջիկները Ահա մի ասարի է, որ Նովորոսիյ-
սկից սկսել են երկաթուղի շինել մինչև Եկատե-
րինոսլավ: Պողոսյանները, որոնք յանձն են առ-
նում երկաթուղու կառուցման, աշխատանքները
վարձում են մշակներին, բայց մեծ մասամբ դըր-
կում են մշակներին նրանց հասանելի վարձից և
միշտ դժգոհվում են ինքնավարձողներին և վարձ-
վածներին մէջ: Յոյն պողոսյանները մինչև մեծ
միասնիկ կրեմլով, նորերումս փակաւ իր գործը
կրեմլով և իր լուծելով և մշակներին իրանց հասա-
նելի վարձը տուած չը լինելով: Այստեղ ամեն օր
կը տեսնէք հարկւարտ մարդիկ Ռուսաստանի
ներքին գաւառներէն եկած, անգործ պարսպ փո-
ղոցներով թափառելիս: Այստեղ ամեն տեսակ
գործեր և առևտուր ընկած գրութեան մէջ են
և փող չամենուն չը կայ:

Ներկայ տարւոյ «Մշակ» № 31 մէջ մենք յի-
շեցինք փարիզում հրատարակող «Revue Fran-
çaise de l'étranger et des colonies» ամսագրի
մէջ տարած պ. Բրուսսարի յօդուածի մասին
«Արմենիա» (L'Arménie), վերագրում: Այժմ նոյն
ամսագրի յոսիսի տեղադրի մէջ, որ երէկ ասա-
ցանք, տպւած է պ. Բրուսսարի միջեւ յօդուածի
շարունակութիւնը: Այդ յօդուածը արժէ կարդալ:

Հոգեզայտեան տոնին մեր ժողովրդի մէջ սո-
վորութիւն կայ զարդարել տները դռները, խա-
նութիւնը, պատուհանները՝ ծառերի թաթմ ճիւ-
ղերով: Այդ կատարեալ վայրենի, բարբարոս սո-
վորութիւնը տարածված է ոչ թէ միայն ամբողջ
կովկասում և Անդրկովկասում, բայց և ամբողջ
Ռուսաստանում: Այդ սովորութիւնն էլ մի ապա-
ցոյց է մեր ժողովրդի մէջ աւերող ոգու, ծառե-
րի ճիւղերը կտրտելով, այդպիսով անտառները
փշտում են, ծառերը շատ անգամ չորանում: Եւ
սա անտառներից գոյն մեր երկիրը, այդ կատա-
րեալէս բարբարոս սովորութեան շնորհով աւե-
լի էլ զրկւում է եղած բուսականութիւնից:
Կարծես թէ եթէ ուզում են հոգեզայտեան օրին
զարդարել տները կանաչով, չեն կարող: Փոխա-
նակ՝ անտառները վայրենի կերպով աւերելու
գործ անել ծաղիկներ և ծաղիկների կանաչը:

Այս տեսան «Աղբեր» ամսագրի մայիսի և յու-
նիսի (№ 5 և 6) ամսորակները և ուղարկեցան
բոլոր բաժանորդներին: Տեղաբնակները, բովանդա-
կութիւնն այս է: Գարնան փունջը, Ս. Գիւլագա-
ղեան. — Բուէն (ժողովրդ. դրոյց) Ա. Մէհրաբեան.
— Ս. Մեռնի օրհնութիւնը, Մ. Աբեղեան. — Եր
փնակից գոհ մանուկը, օր. Ս. Շիսիանց. — Գա-
րուն (բանաստ.) Ա. Շատուրեան. — Խնձոր — եղբ
Ս. Քամակեանց. — Դերուշի Սարգսի յիշատակա-
րանքը, Բ. Գորբախեան. — Պահապան հրեշտակ
(բանաստ.) Ղ. Հ. Աղաման. — Ինկազար Բէսոս
(օտական աւանդ. վ. Ս. Սոյոզիէլի). Կ. Մարտիրո-
սեանց. — Գիտ ու թիւն. Խոսեղենի (պրոֆ. Մ.
Բողանով) Ա. Բաբախանեան. — Հեռաւոր բոյս. Հրդե-
հաշէջների նոր հանգում: Արեգակային վառարան:
Լուսային հեռագիր. Անտոնի Մազլիթսկի. Հին
Մոլդաւ. Ձեռքով տպելու մի նոր միջոց. — Ա. Լ. և
ա. լ. Զննարտութիւն նորահարս. օր. Ս. Սերեբ-
րակեան. — Չոսարձա իւր. Խոսնոցում. Հանե-
լուկներ. Շուտանդուկ. Բէրուս. Եղած հանելուկ-
ների բացատրութիւն. — Յայտարարութիւններ
«Աղբեր» այդ տեսարանները գեղեցիկ պատկեր-
ներով են զարդարած:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԵՆ ԳՐՈՒԹԱՎԱՌՈՒԹԻՒՆԵՐ

ՄԻՆԵՐՆԵՆ, 2 յունիսի Բաղրիայի թաղաւորը,
Բերդ պարտէզում դրոսնելիս, նետովք լինը և
խնդրովք: Թաղաւորի բնիչ Գուրգէն, որը ուղեկ-
ցում էր նրան, ընկաւ լինը թաղաւորին ազատե-
լու, բայց ինքն էլ խեղդվեց: Երբ երկու դիակնե-
րը իրից դուրս հանեցին, տեսան, որ Գուրգէնի
երեսը անգամ է ինչպէս երեսում է թաղաւորը
ընդդիմադրել է, հուշելով ազատվել: Բաւարիայի
երես միմիայնակը ինքնուրուքին Բերդի ամրոցը
մասկան վաւերացրել, իսկ ինքնուրուքին համար Շուտով
թաղաւորի մարմինը կը բերվի Միւնխեն: Թա-
ղաւորի յաջորդ հուշակից նրա եղբայր, իշխան
Օտտո առաջինը, իսկ ինքնուրուքին մնում է Լու-
իսպոլը: Զօրքերին երգմանցին թաղաւորին և
ինքնակալին հաւատարմի մնալու: Այսօր հրա-
տարակցած է Բիւրջների արի եղբայրներին,
որը տուած է արդէն յունիսի 8-ին և որը վկա-
յում էր թաղաւորի անդուծելի խեղաքարութեան
մասին:

ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ, 3 յունիսի: Սենատը լսելով Ան-
տոն Կորգանովի և միւսների վճռալին զանգար
թիֆլիսի դատարանական պալատի վճիռ վերա-
քերմամբ, որով Կորգանով մեղադրւում էր յորդո-
րումներ անելու, իսկ միւսները վաւերացրել
կեղծելու: Տեղ-Մկրտչեանցի գրաւականը ոչնչաց-
նելու նպատակով որոշեց նետակալը: Պալատի
վճիռը փոխելով, յանձնելով գործը վերստին քննու-
թեան համար պալատի այլ բաժանումներին Բացի
սրանից սենատը որոշեց, նկատողութիւն անել
դատարանական պալատին, քրեական դատա-
ւանական օրենսդրութեան 265 յօդուածի հիման
վրա:

ՄՈՍԿՎԱ, 3 յունիսի: Մեկ, իր կալուածքում,
Կոստրոմայի նահանգում, վախճանվեց հեղինակ
Ա. Ն. Օստրոլեկին:
ԼՈՆԴՈՆ, 3 յունիսի. Գլադստոն իր ընտրող-
ներին ուղարկած մանիֆեստում յայտարարում է,
որ երկիրը պէտք է վճնի, հարկ է արդեօք գործադ-
րել իրենցից: Մէջ սահպողական միջոցներ
կամ տալ նրան ինքնավարութիւն: Կարենտի
հակառակորդները, ասում է, Գլադստոն հեր-
քում են թիւլը տեղութեան միութիւնը պահպանե-
լու անհրաժեշտութեան պատճառով: Բայց այդ
միութիւնը ձեռք է բերված ուժով և խաբու-
թեամբ և այդ երբեք ընդունված չէ եղել իրան-
դացիների կողմից: այնու ամենայնիւ կարենտի
առաջարկած միջոցները ոչ թէ կը ջանքեն այդ
միութիւնը, այլ ընդհակառակը կը հաստատեն
ընդ միշտ, որովհետև կը հաշտեցնեն իրարացի-
ներին Մեծ-Բրիտանիայի հետ և կը վերցնեն այն
անարդ արտար, որը զրկւած է Մեծ-Բրիտանիայի
վրա ամբողջ լուսաւորված աշխարհի կարծիքով:

ՍՈՅՈՒՄ, 3 յունիսի: Երէկ իշխանը բացեց ազ-
գային ժողովը մի ճառով, որով նա մասնացոյց
արեց այն բանի վրա, որ շնորհիւ բոլորական
գոյրի աշխուժեան և ազգի անհնազանդութեան,
երկու Բաղրախաների միութիւնը, որը երկարա-
մնաց և սրտազին գանկութեան առարկայ էր, իրա-
կանացած եղելութիւն դարձաւ, որին իբրև ապա-
ցոյց կարող է լինել ընդհանուր ազգային ժողովի
գումարումը, որը պէտք է վճնի այն հարցերը, ո-
րոնք վերաբերում են ընդհանուր հայրենիքի շա-
հերին: Իշխանը աւելցրեց, որովհետև պատե-
րազմի պատճառով երկրի նիւթական միջոցները
պակսեցին և առաջ եկան նոր ծանրութիւններ և
պէտքեր, այդ պատճառով կառավարութիւնը կեն-
թարէ նրանց համապատասխանող օրինադրեր
ժողովի հայեցողութեանը:

ՄԻՆԵՐՆԵՆ, 3 յունիսի: Թաղաւորի մարմինը
բերկեցաւ այստեղ այսօր երեկոյեան: Որովհետև
շատ ուշ էր և մարմինը այստեղ հասնելու մա-
սին յայտարարած էր, այս պատճառով բաղմու-
թիւն չը կար հաւաքված:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆԻ ԲՈՐՍԱ
Յունիսի 4-ին

Ռուսաց 1 ռուբլ. 1 ժողովի վրա արժէ	231/2	պէնս
— — — — — 2 ժողովի վրա	199 3/4	պֆ.
— — — — — 3 ժողովի վրա	247 1/2	սան.
Ոսկի — — — — — արծէ	8	ր. 39
Մարտային կուպոններ	8	» 39
Արծաթ — — — — —	1	» 24
Բորսային դիվիդենդներ	3 3/4	» 60
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100	» 62
— — — — — 2-րդ	100	» 67
— — — — — 3-րդ	100	» 62
— — — — — 4-րդ	100	» 62
— — — — — 5-րդ	100	» 75
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	100	» 62
— — — — — 2-րդ	100	» 50
— — — — — 3-րդ	100	» 62
Ներքին 5% առաջին փոխառութ.	244	» 50
— — — — — երկրորդ	227	» 25
5 1/2% Բէնտա	105	»
Ոսկեայ բէնտա	185	» 50
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն.	157	» 37
5% գրաւական թղթեր կալուած.		
— փոխ. կրեդ. ընկ.	162	» 50
5 1/2% գրաւական թղթեր խնդրանքի	98	» 75
— կալուած. բանկ.	102	» 37
6% գրաւակ. թղթ. խարկովի կալ. բան.	102	» 75
— — — — — Պոլսական	102	» 75
— — — — — Պետ. Տօլսկ.	102	»
— — — — — Կիեւի	102	» 50
— — — — — Մոսկովայի	103	»
— — — — — Բեսարաբ. Տաւր.	101	» 50
— — — — — Նիժ. Սամար.	103	»
— — — — — Վլ. ընկ.	102	» 50
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ. 97		
— — — — — Բաթումի — 18 և 43 տ. 97		

Վ. Օլոպով-Վանիկի բանկի ակցիաները 515
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. բնկ. 260
Ռիբինսկ-Վ. Օլոպով. բնկ. 82
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի-
նացիաներ. 93 » 12
Մոսկովայի քաղաք. օրդ. 95 » 62
Օրդնայի. 96 »

Ս. Պետերբուրգի քաղաքի տրամադրութիւնը
հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ, բարձրագոյն հաստատած քաղաքային կա-
նոնադրութեան 17 և 22 յօդ. և այս տարուայ մայիսի 5-ին կայացած քաղաքային դո-
մայի որոշման համաձայն, հրաւիրում է պ.պ. տնտեսներին, որոնք յանկանում են մաս-
նակցել քաղաքային առաջիկայ 1887—1890 թ. չորսամսակի ընդհանուր ընտրութիւն-
ներին, ներկայացնել անմիջապէս քաղաքային զանաքանիւն մինչև այս տարուայ մայիսի
31-ը իրանց կալուածքների վերայ մնացած գնահատութեան հարկի-ապառիկները: Քա-
ղաքային վարչութիւնը արանով յայտարարում է, թէ այն անմիջապէս, որոնք նշանակեալ ժա-
մանկամիջոցին լիովին չեն ներկայացնել իրենց վրա մնացած ապառիկները, ընտրողա-
կան ցուցակներից դուրս կը գցուին:

(120) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի փոխութեան ընդհանուր-
ութեան, թէ քաղաքային դոման, ի նկատի ունենալով առաջիկայ 1887—1890 չորսա-
մսակի քաղաքային ընդհանուր ընտրութիւնները, 1886 թ. մայիսի 5-ի նիստում որոշեց

- 1) կազմել և վերջացնել ընտրողական ցուցակներ մինչև ներկայ տարուայ օգոս-
տոսի 1-ը:
- 2) Ընդհանուր և անբաժան կալուածքում մասն ունեցողներին առաջարկել յայտ-
նելու վարչութիւնը մինչև Յուլիսի 1-ը ընդհանուր կալուածքում իրանց մասն ունե-
նալու մասին, ցոյց տալով իրանց պատկանելի բաժինը: Յայտարարութիւնը ներկայա-
ցնելուն պէս վարչութիւնը հաւաքած հարկը հաւասարապէս կը բաժանէ կալուածա-
տէրերի մէջ, եթէ յայտնի է նրանց թիւը:
- 3) Ընտրողների հաւատարմատարները և անապահաս ընտրողների խնամակարները
պէտք է ներկայացնեն եօթ օր ընտրութիւններից առաջ քաղաքապետին՝ առաջինները
սահմանած դրոշմաւոր թղթի վրա գրած իրանց հաւատարմութիւնը (շրջաւ. Ե. Գ.
Միսիստ, 1876 թ. Նոյեմբերի 26-ից, № 10,766), հաստատած նոտարի ձեւով, եթէ
նրանց յանձնողների ստորագրութիւնները ծանօթ չեն վարչութեանը, իսկ վերջինները
խնամակարական հաստատութիւնների հրամանները, որով նրանք նշանակուած են խնա-
մակարութեան կողմի մէջ: Ինչպէս հաւատարմատարներին, նոյնպէս և խնամակարներին
գրել ընտրութեան ցուցակներում մի համարի տակ իրանց յանձնողների և խնամակա-
րողների հետ, իսկ ընտրողական ժողովի նիստի օրը, այդ անձանց անունները կախել
նիստի դահլիճում:
- 4) վարչութեան կողմից պատրաստած ընտրողական ցուցակները, յայտնել ի փո-
խութեան ընդհանուրութեան Սեպտեմբերի 4-ին, իբրև յաւելուած տեղական լրագրիներին,
ուղարկել նրանց քաղաքի ստորագրողներին և ցուցակները հանդէս հանել դոմայի
դահլիճում:
- 5) Ընտրողական ցուցակներում եղած անկանոնաւորութեան դէմ քաղաքի բնակիչ-
ների կողմից արած նկատողութիւնները, ընդունել քաղաքային վարչութեան մէջ բացա-
ռապէս Սեպտեմբերի 7-ից մինչև 21 և նրանից յետոյ ցուցակներ ներկայացնել դոմա-
յի հաստատութեանը: Քաղաքային վարչութիւնը պատիւ ունի յայտարարելու այս գը-
րուածները, որպէս զի այն անմիջապէս, որոնք ընտրութեան փամփուկ ձայն ունեն, իր ժա-
մանակին ուղարկեն Քաղաքային վարչութեանը այդ մասին իրանց նկատողութիւնները:

(121) 3—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Հինգշաբթի 12-ին յունիսի ԲԱԹՈՒՄԻՅ դուրս կը գնայ RIO-GRANDE (ՐԻՕ-ԳՐԱՆԴ-
ԴԵ) շոգենաւը, նաւապետ REVEL (ԲԵՎԵԼ) մանկով Կ. Պօլիս և Չիլեանի և յարակիցելով
Եաֆա, Պորտ-Սէյլիդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԵԼԼԵՐՍ ԲՈՒՐ-
ԿԶԱՐԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ, ՀԵՋՈՒԲԵԱՆՅԻՆ:

3—3

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Չորեքշաբթի, յունիսի 11-ին, «ԱՐՄԵՆԻԱ» (ARMENIE) շոգենաւը, նաւապետ
ՇԵՕԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սաւան,
Կ. Պօլիս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին, և Թիֆլիսում պ. Բէնօն, նախկին Արժ-
րուոն գալլերեան, № 103.

4—4

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵԼԵԿԱԳՐ փառաւանական դատակարգին պատկանող
Խաղաղապետ անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ԶԵՆՆԱՐԿ առևտրական հաշուարարու-
թիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսուցիչներու համար:

Ս. ՄԱՆՈՒԵԼՅԱՆԻ

ԶԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է կնիք. գրավաճառանոցում, եղբայր Շօփրանովների բանկային
գրասենեակում և հեղինակի մօտ. Типопись, Лабораторная, № 11: Ուսարա-
բաղաբացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Мануэляны.

Գինն է ամեն տեղ 2 ռուբլի:

24—30